

պիտի բանդագուշէ, որով սրտին ու ըղբղին ամայութիւնը պիտի լեցուի: Գոնեա այն աղուոր աղջկան առջև, իր միայնութիւնը կոտրելու համար՝ երևցած զուարթ ցնորքին առջև բանտին դռները պիտի բացուին. պիտի կարենայ անոր այցելութեան երթալ, քովը նստիլ, մօտէն քալել, ետեէն երթալ, երեսին ժպտիլ ու սիրել զայն: Իր կեանքովը, շնչովն ու սիրովը պիտի ապրեցընէ. մտքէն պիտի խօսի. աչքերը գոց՝ պիտի տեսնէ. իրարու հետ մէկ պիտի ըլլան, ու ինքն երկու պիտի ըլլայ:

Այսպէս Ֆէնէսդրէլլոյի բանտեալը զուարճալի հետաքննութեանցն ետեէն խարէական զմայլման մէջ կ'ընկղմէր և

հետզհետէ բանաստեղծութեան խորը կը մտնէր, ուսկից այնպէս կ'ելլէ մարդ՝ ինչպէս մեղուն ծաղկանց զրկէն անուշահոտ ու մեղրալից: Դրական կենացն ընթեր երևակայական կեանքն ունէր առջինն ամբողջացնող, առանց որոյ մարդս կիսով կը վայելէ Արարչին բարիքը:

Արդ իր ժամանակը կէս մը Բի'յիոյ շատնկոյն, կէս մ'ալ Բի'յիոյ օրիորդին հետ կ'անցընէ: Պատճառաբանութենէ ու աշխատութենէ վերջը, հաճոյք ու սէր կը վայելէ:

Կը շարունակուի:

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ

ԱՆԻ

ԱՌԱՍՊԵԼՔ. — Զառասպելացն որ զքաղաքէն Անույ չունիմ՝ ասել յումմէ ճարտարամտեալ զառաջինն՝ եհաս կալաւ զմիտս խառնաղանճ մարդկանն, և և աշխարհատես մարդոց ոմանց և 'ի գիր և մխեցաւ: Ոմանք յառասպելացդ ամենեւին սուտ են՝ զի և հակառակ են բնութեան. այլք կերպարանափոխ եղեալ տասնպատիկ յաւելուածով: Թէպէտ չէր արժան և յիշել իսկ զնոսին, այլ զի մի անյիշատակ առնելով՝ 'ի նմին կանխակալ սովորութեան թողցուք զլամիկ մարդիկն, համառօտիւք յիշել արժան համարիմ: Առաջին զվաճառանոցէն առասպելաբանեն թէ յաւուրց անտի Անեցոց պէսպէս ագանելիք կայցեն 'ի նմա, և պուրակք այլ և այլ ձեռագործաց կտաւոց դիպակաց կերպասուց նովին դրիւք շարեալ 'ի դարանս և նովին գունդն որպէս ինչ 'ի սկզբանն էր. և յորժամ ձեռնածէ ոք առ նոսա զնեւ, զի մաշեալ և փտեալ են՝ իսկոյն 'ի փոշի լուծանին: Երկրորդ թէ ընդ երկրաւ պէսպէս իջեվանք կայցեն և տունք փառահեղք, յորըս տակաւին ամենայն կարասիք ողջ կան 'ի նոսին, մանաւանդ անօթք կերակրեղինաց պղնձիք և կարգաւ շարեալ 'ի դարագս շուրջանակի. և ըստ դիպաց գտեալ ումեմն զմուտ նոցա, և չհամարձակեալ առանձինն 'ի բաց առնուլ 'ի նոցանէ, ելանէ արտաքս և գտեալ զոմանս իւր օգնական՝ կամեցեալ իցէ վերըստին մտանել անդր և բառնալ որ զինչ և կամիցի. այլ աւուրս երիս խնդրեալ

զմուտ նոցին և ոչ գտեալ, զի յաներևոյթ ոգւոց փակեցաւ դուռնն առաջի նոցա, և ունայնաձեռն յետս դարձան: Երրորդ, թէ չպակասեն 'ի քաղաքի անդ վայրենի գազանք, և յաւերական լի իցեն օձք մեծամեծք: Եթէ ճշմարիտք էին այդոքիկ, չէր հարկ Անույ միայն սեփականել զայդպիսիս, զի յաւերակ և յանմարդի տեղիս երևոյթք գազանացդ չեն պակաս. սակայն իմ աւուրս բազումս չըջեալ 'ի քաղաքին յառաւօտէ մինչև ցերեկոյ, ոչ 'ի ձմերան և ոչ ամարանի չտեսի և ոչ զմի 'ի նոցանէ: Զորրորդ, զգուշեալ պատուիրեն որ շրջագայելոցն է 'ի նմա, զի ընդ ամենայն քայլափոխս շուրջ հայեսցի թէ ուր դքայլս ոտիցն դնէ. զի բազում գութք են 'ի նմա՝ ասեն՝ խորինք և ջրհորք և ջրամբարք, և բերանք նոցա գետնոյն հաւասարք և ծածկեալ 'ի մացառաց որ անտառացեալն է անդ: Եւ այս դարձեալ սուտ. զի ոչ մացառօք անտառացեալ է վայրն և ոչ խորան. դուռդ փութք երևին ուրեք կամ ջրհորք. թէպէտ չպակասեն 'ի նմա գութք, այլ յոյժ սակաւք, և խորութիւն նոցա ոչ աւելի քան զմարդաչափ և կէս, յորոց ու մանք լցեալ և ծածկեալ են յաւերակաց¹: Զառասպելսդ ամենայն 'ի դերև հանեալ, երկիւղ գողոցն և աւազակաց թերևս ահ արկանիցէ առ հեռաւորս. այլ այդ երկիւղ ոչ միայն յԱնի, այլ և յամենայն անմարդի տեղիս տիրէ, մանաւանդ յերեսաց Քրդաց. բայց որ ծանօթ և զինեալ ուղեցուցիւ շրջագայի, նմա չիք երկիւղ և ոչ մի. քանզի և խաշնարածք բազում անգամ չպակասեն անդ, և գողոյ չէ համարձակելի զինելոց և անձանց աւելի քան երկուց՝ ընդդէմ ելանել: Այլ այսու ամենայնիւ ոչ անխորհրդաբար ոք ինչ գործէ եթէ զգոյշ լիցի ձիոյն և կարասեացն յագանելն ուրեք, զի 'ի նոսին առաւել ագահեն աւազակաբարոյ Բուրդք:

Վերջ տուեալ տեղագրութեան քաղաքին Անույ և որ անընդմիջաբար զնովան էին արտաքոյ պարսպին, անցանեմք յարևելս նորա 'ի նմին գաւառին Շիրակայ:

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔ, (ԽՕՇԱՎԱՆՔ)

Տիեզերահռչակ մենաստանն Հոռոմոսի՝ ժամաւ հեռի յԱնույ յարևելս նորա կառուցեալ է 'ի վերայ երկայնաձև բլրի, որ իբրու ցամաքակղզի ձգեալ է յաւելից յարևմուտս. 'ի հարաւոյ նորա անցանէ Ախուրեան գետ ընդ ձորամէջն խորանդունդ, որպէս առ Անուով, և չրջան առեալ զարևմտիւք նորին՝ անցեալ գրնայ 'ի կողմն Անույ: Իսկ 'ի հիւսիսոյ զատանի բլուրն այլով դաշտավայր ձորամիջով, զորմէ զկնի: Զշինութենէ նորա և այլատարազ անուանակոչութենէն չպակասեն յիշատակարանք առ մատենագիրս մեր, Ասողիկն և Վարդան և Կիրակոս: Ի տասներորդ դարուն հիմնարկեալ մենաստանիս 'ի ձեռն Յովհաննու


¹ Հտեմարանք են այդոքիկ ցորենոյ. որպէս մինչև ցայսօր պահի սովորութիւնդ յամենայն գիւղօրէս Շիրակայ. զի փոս փորեն 'ի գետնի նեղաբերան և լայնափոր 'ի ձև բղկաց, զոմանս վարկպա-

րազի քարամբք չըմպատեալ և զոմանս առանց այնր. և յամբարելն 'ի նոսա զցորեան շուրջանակի պատեն յարգիւ. և քար 'ի բերան եղեալ ծեփեն, և անեղծ պահի ցորեանն 'ի նմա:

ուրումն որ պատուոյն աստիճանաւն անծանօթ եղեալ՝ բարեպաշտութեանն մասամբ անուանի գտաւ 'ի ժամանակին . ծանօթութիւնդ այդպիսի աւանդութեամբ եհաս առ մեզ 'ի ձեռն մատենագրացդ զոր յիշեցաք . սակայն յառաջնոյ արձանագրէն՝ յորում Յովհաննու թագաւորին սեփականի , թուի ինձ 'ի բանից անտի նորին արձանագրի մենաստանին՝ շինեալ յառաջագոյն 'ի տասներորդ դարուն , յետ այնորիկ զեկեղեցին շինեաց Յովհաննէս թագաւոր՝ որ էր 'ի սկիզբն մետասաներորդ դարու : Արդ որպէս և է , հիմն արկեալ մենաստանիս յանուն սրբոյն Յովհաննու , որպէս տեսցի ստորև 'ի խուռն արձանագրացն , սեփականեցաւ նրմին և անուն այլ՝ Հռոմուսի . իբր զի ընդ աւարտիլ շինուածոյն կամ փոքր մի զկնի՝ կրօնաւորաց ոմանց Հայոց՝ յերկրէն Հռոմոց փախուցեալ 'ի պատճառս հալածանացն Յունաց , եկեալ բնակեն աստ . անտի և այսր մականուանեալ կոչեցաւ Հռոմոսի վանք : Ի վաղեմի շինուածոց մենաստանիս անկործան կան ցայսօր , առաջին՝ եկեղեցին , երկրորդ՝ տապանատունն և առ նովաւ փոքր մատուռն և կամարակապ տեղիքն , և երրորդ՝ նշխարատունն : Արևելեան որմ եկեղեցւոյն սահման է վանացն յայնմ կողմանէ . և երկուստեք նորա չափաւոր միջոցաւ պարիսպ ածեալ ամրաշէն 'ի սրբատաշ դեղնագոյն քարանց , յայնմ կողմանէ 'ի հարաւոյ և յայսմ կողմանէ 'ի հիւսիսոյ , յորում է և արտաքին դուռն վանաց , սահմանի յարեմոից կուսէ երկայն և հոյակապ իջեմանիւ , այն է քերականաւայ ասացեալն 'ի հիւսիսոյ 'ի հարաւ : Յարտաքին դրանէն որմ ածեալ 'ի հարաւ կոյս՝ միանայ ընդ շինուածոյ վանացն , և յորմն անդ է ներքին և բուն դուռն մենաստանին . որպէս զի արևելեան մասն յանջրպետէ այտի՝ ներքին և բուն սահման մենաստանին է , և արեմոեանն մինչև ցիջեմանն՝ գեղջէից տունք էին , արդ առ հասարակ քայքայեալք յետ գաղթելոյ նոցա առ Ռուսս : Տեսցուք արդ մի առ մի զարհեստ ճարտարապետութեան մեծագործ շինուածոց նոցա :

ԵԿԵՂԵՑԻՆ . — Արտաքին տեսիլ եկեղեցւոյն չորիւք սահմանի կաթողիկէիւք . իսկ ձև նորա՝ որպէս ճշգրիտ երևի 'ի պատկերիդ՝ յերկուս բաժանեալ է , նախ գաւիթ կամ որպէս առ նախնեօք կոչէին՝ ժամատուն , և ապա տաճար , միջնադրամբ հաղորդեալ միմեանց , և յիրերաց ոչ շատ տարբերեալ մեծութեամբ : Գաւիթն սիւնազարդ է և հոյակապ յոյժ . երկուտասան 'ի սեանցն առ որմովք կան շուրջանակի , և չորս ևս այլ 'ի միջավայրին , յորոց վերայ ամբարձեալ կաթողիկէն առաջին , որ և զանգակատուն է սիւնազարդ շուրջանակի : Որմակամարք միջին չորից սեանցն ուղղաբերձ ամբարձեալ նախ , ապա կողմանքն չորեքին առ իրեարս շեղեալ՝ բրգաձև աւարտին 'ի ծայրին՝ ուր և հիմն կաթողիկէին սկսանի : Կողմանք բրգաձևիդ 'ի մեծամեծ միակտուր քարանց են , ազգի ազգի դրուագօք քանդակեալ իւրաքանչիւր : Միակտուր են ամենայն սիւնքն և բոլորչի . թէպէտ և ոչ երկայնք , սակայն վերնախարսիօք իւրեանց և ներքնախարսիօքն՝ ոչ մի ինչ թերութիւն ածեն վսեմութեան շինուածոյն : Ամենայն սիւնք 'ի վերնախարսխացն կամարաւ հաղորդեալք առ միմեանս 'ի քառից կողմանց ևս , յարկ իւրաքանչիւր միջոցաց՝ բաց 'ի միջավայրէն յորոյ վերայ է զանգակատունն՝ զայս օրինակ ճարտարապետեալ են . չորեքին կողմանք իւրաքանչիւր միջոցաց սեանցն փոքր մի աղեղնաձև մերձեցեալ են առ միմեանս , միջին վայրքն կամ թէ ասել կեդրոնքն լայնածիղք՝ տափարակք իբրև զառաստաղաց են՝ մեծամեծ քառա-

կուսի քարինս ունելով շուրթն առ շուրթն հպեցուցեալ, որ ամենևին անխախտ կան ցայսօր: Տաճարն անսին է, և ՚ի վերայ կամարագօտեաց չորեցուն կողմանցն



այլ գօտի ածեալ մանեկաձև՝ խարիսխ կամ հիմն եղեալ է մեծի կաթողիկէին, որոյ լուսամուտք են շուրջանակի երկայնաձևք: Միախորան է տաճարս, մատրունս կրկին ունելով երկուստեք խորանին: Եթէ թերութիւն մի կայցէ ՚ի հոյակապ եկեղեցւոյս մթութիւնն է, մանաւանդ ՚ի գաւթին: չորս լուսամուտք միայն են նորա բոլորչի և փոքր, յորոց երկուք ևեթ լուսաւորք ՚ի հիւսիսոյ, և որք ՚ի հարաւոյ՝ անլոյս են, զի արտաքոյ գաւթն կամարաձև հանդերձ շինուածովն հանդիպոյ խափանեալ ունի զլոյս նոցա: Ի նոյն կողմն է և դուռն փոքրիկ նոյնպէս անլոյս. և լուսաւորութիւնն ամենայն ՚ի նախադրանէն է յարեմոյ կուսէ, և փոքր մի ՚ի զանգակատանէն: Մթութիւնդ զոր տաքաք՝ հասարակ է ամենայն հնաշէն եկեղեցեաց արեւելից, գուցէ առ ահաւոր և պատկառելի ցուցանելոյ

զարբութեան տեղիսն: Ոչ սակաւք են գերեզմանք վարդապետաց 'ի յատակ եկեղեցւոյս անդիր և անծանօթ. յորոց մի է գուցէ գերեզման Ա. Սարգսի կաթողիկոսի որ աստ թաղեցաւ, որպէս վկայէ Լաստիվերտցի: Բազմաթիւ են յոյժ արձանագիրք եկեղեցւոյս ներքոյ և արտաքոյ. այլ բաց յառաջնոյն այլքն առ հասարակ յիշատակարանք են հասութից որ 'ի բարերարաց սեփականեալ են վանաց. մեք զամենայն միախուռն 'ի մի ժողովեալ ըստ կարգի, զառաջնոյն քննութիւն այլոց թողցուք միաբանել ընդ Ասողկայ բանիցն, թէ մեր քննութիւնս զոր 'ի վերն արարաք՝ չիցէ բաւական յանկուցանել զմիտս հետաքնին հնասիրաց: Արդ առաջին յարձանագրացդ է վերոյ աւագ դրանն յարեմտից 'ի ճակատ եկեղեցւոյն.

✠ 'ի ՆՁԻ Թուականիս հայոց ետուռ ես յովաննէս շահանշահ որդի գագկա շահանշահի զիմ այգին որ 'ի կողք յիմ եկեղեցիս 'ի սուրբ յովաննէս զոր շինեցի 'ի վանսս հոռովմոսի հանդերձ ժամատամբս եւ հարիւր բեռն աղ յամենայն ամի ազատ յամենայն չարէ 'ի հայրապետութեան նոն պետրոսի եւ յառաջնորդութեան ուխտիս հաւր յովաննիսի արդ եթէ ոք զկնի մեր հակառ կա այսմ գրոյս եւ իմ պարգեւացս պարտական լիցի մեղաց իմոց առաջի նոյ եւ յԺՐ հայրապետացն որ 'ի նիկիա նզովեալ եղիցի 'ի կեանս եւ 'ի մահ իսկ որ հաստատուոն պահեն զգիր արձանի ընծայիցս աւրհնեսցին 'ի քէ:

Թաղմէ ճակատուն.

✠ շնորհիւն քի ես հեճուպ գրիգոր եւ սմբատ եւ իշխանս հաստատեցաք 'ի մեր սեփական ուխտս որ ոչ պատրոն եւ ոչ ճորտ 'ի վանքս աղուոնձ աղան եթէ ոք զգիրս զայս պատրոն կամ հայր լուծանէ նզովի յայ և յամենայն սրբոց.

'ի ԹՎ. ՈՂԶ անուամբն նոյ եւ շահնշահի ողորմութիւն ես . . . անագովլէս որդի սմբատա ետուռ 'ի դրասպարի զգիշկոյն տուոնն իւր հողովն ոնց գիշուկն ունեցեալ է հոռով վանիցս նր յովանիսի հայրենիք վն իմ հաւր հոգոյն սմբատա զոր յառաջ միաբան էին լեալ ազատ 'ի կ . . . Թաէ եւ յամեն չարէ ոչ իմ եղբաւր ոչ իմ որդոյն ոչ ինչ հաշիւ չկայ իշխանութիւն նր յովանիսի սպասաւորքս ունին յառաջնոր-

դուլթեան տը բարսղի որդո ամիր երկաթա փոխարէն հատուցին միաբանքս զնր գրիգորի շաբաթն աւրն յամենայն եկեղեցիս պատարագ առնել իմ հաւրն սմբատա ով զայս Գիրս խափանէ նզովի յայ եւ յԺը հայրապետացն որք հաստուն պահեն աւրհնին յայ եւ յամենայն սրբոց ամէն .

Յահելէ ճակատուն .

ՈՁ շնորհիւն քի ես ասլանս որդի շերանկանն եւ զիւգակից իմ ասուշիս տուաք զմեր գանձագին հայրենիքն զգողեցն զկէս դանգն իւր հողովն եւ ջրովն 'ի նր յովաննէս յառաջնորդուլթեանս տը բարսղի արհիեպիսկոպոսի որդւո ամիր երկաթա եւ սպասաւորք սորա փոխարէնս հատուցի մեզ 'ի տարին : ի : պատարագ կատարել զի ինձ ասլանիս եւ ի ասուշահին եթէ 'ի մերոց կամ յաւտարաց զյիշատակս մեր խափանէ նզովի յայ հաստատ պահողքն աւրհնին 'ի քէ .

'ի սոյն ամի ես խոսրով որդի վարհմա լաւուեցո եւ զիւգակից իմ շուշիկ տուաք զմեր գանձագին հայրենիքն զքարհատին դանկն իւր հողովն եւ ջրովն 'ի նր յովաննէս եւ հատուցին մեզ 'ի տարին : ի : պատարագ : ի : ինձ եւ : ի : շուշիկան եւ : ի : վարհմա եթէ ոք զարձանս մեր խափանէ նզովի յայ կատարողքն աւրհնին 'ի քէ .

'ի սոյն ամի ես կազերս որդի սուկատին եւ մայր իմ մամիկս տուաք զմեր երկու տունն 'ի նր յովաննէս եւ առաք պատարագ 'ի տարին ի աւր նա ինձ եւ մին իմ մաւրն կատարիչքն աւրհնին 'ի քէ :

Ես շուշիկս զիւգակից խոսրովու ետու զիմ տներն 'ի նր յովաննէս եւ առի ինձ պատարագ 'ի տարին աւր մին կատարիչքն աւրհնին 'ի քէ .

Ես բարգողիմէոս արեղա փարբեցի ետու զիմ գանձագին

այդին որ 'ի փարբի է 'ի վանացս 'ի հիւրատունս եւ նոքա հատուց ինձ պատարագ 'ի տարին աւր . . .

կամաւն այ ես քոթիթ ճոնս եւ կենակից իմ շահամամս տուաք զուրի դանկն իւր հողովն եւ ջրովն ոնց բնական լեալ է 'ի նք յովաննէս եւ ե . . . շինած տներս 'ի նք յովաննէս եւ սպասաւորք սորա հատուցին մեզ 'ի տարին զ պատարագ մին ինձ քոթիթին ք շահամամին մին վարդանա ք սար էթէ ոք 'ի մերոց կամ յաւտարաց զգիրս մեր խափանէ ելցէ 'ի կենացն այ կատարիչքն աւրհնին 'ի քէ .

եւ իգնատիոս որդի աքեղին եւ կենակից իմ մամեր տուաք զմեր հայրենիք կէս դանկն 'ի մարաց մարգի 'ի նք յովաննէս եւ սոքա ետուն մեզ պատարագ 'ի տարին ք աւր . ն . ինձ և . ն . մամերոյն էթ 'ի մերոց կամ այլ ոք զգիրս մեր խափանէ նզովի յայ . *

Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ



Յարեաւ . զիմրդ ի մահուանէն
Ի բաց աւար իւր կապտեցաւ .
Ո՛րպէս յաղթեաց նա դրանց նըսեմ .
Ի՛բր ել այսրէն ազատ անցաւ ,
Այն որ ընդ բռամբ եկաց այլում .
Ես ի յանուն նորին երդնում
Որ զնա կանգնեացն ի մահուանէ :
Յարեաւ . արդ գլուխ իւր սրբբանուէր
Ի վարչամակն այլ ոչ հանգչի .
Յարեաւ . ի կողմն անդ աւրնթեր .
Գերեզմանին մենաւորի
Կայ կափարիչն թաւալեալ .

* Զայլ յարձանագրաց գտցեն սիրողք յառանձինն տպագրութեան մատենիս, զի ոչ կամեցաք աստանօր ծանրանալ օրագրիս :